ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

N << *ՀՀՏՄ-ԷԱՃԾՁԲ-23/2*>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 15 >> փետրվարի 2023թ.

Ժամը 16:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Ա. Բաբլումյան

Անդամներ՝

ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Ռ. Տիգրանյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Մ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա.Մանգասարյան

1. << *ՀՀՏՄ-ԷԱՃԾՁԲ-23/2*>> ծածկագրով **«Ներքին աուդիտի ծառայությունների»** ձեռքբերման մրցույթի հայտերի գնահատման վերաբերյալ.

Սույն ընթացակարգի թիվ 02 արձանագրությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից՝ Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ, էլեկտրոնային աճուրդի ավտոմատ համակարգով պահանջված շտկումը կատարվել է, բացակա փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում՝ Հրավերի պահանջներին համապատասխան ձևով:

Ելնելով վերոգրյալից և գնումների օրենսդրության պահանջներից ՀՀՏՄ-ԷԱՃԾՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Մրցույթի ընտրված մասնակից ճանաչել՝ Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին:
2. Սույն ընթացակարգի Հրավերի պահանջներին համապատասխան ընտրված մասնակցից պահանջել տեխնիկական բնութագրում առկա <<Աշխատանքային ռեսուրսներ>> բաժնով նախատեսված փաստաթղթերը, որոնցում ընդգրկված աշխատակիցները, ովքեր պետք է իրականացնեն Կատարողի՝ Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցումը, պետք է ունենան Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ, համատեղությամբ չաշխատեն ներքին և/կամ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններում, կամ այլ կազմակերպություններում աշխատեն որպես ներքին աուդիտոր:
3. Սույն արձանագրության պատճենը տրամադրել բոլոր մասնակիցներին:
4. Պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում և անգործության ժամանակահատվածից հետո՝ սույն բաժնի 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերի ընդունումից հետո, չորրորդ աշխատանքային օրը ընտրված մասնակցին ծանուցել պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Բաբլումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Տիգրանյան

Մ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան